

ԳՐԻԳՈՐ ՊՈՂԱՐԵԱՆ, «ՑԵՂԱՍՊԱՆ ԹՈՒՐԳԸ – ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ,
ՔԱՂՈՒԱԾ՝ ՀՐԱՇՔՈՎ, ՓՐԿՈՒԱԾՆԵՐՈՒ ԶՐՈՅՑՆԵՐԷՆ», ՊԷՅԻՄԼՔ,
1973, 207 էջ:

Գրիգոր Պողարեանը առաջինը չէ, որ քով քովի բերած եւ
նոյն կողքի ներքեւ տուած ըլլայ Հայկական Տասնհինգին հետ ան-
միջական կերպով առնչուող մաս մը վկայութիւն: Հայ եւ օտար
բազմաթիւ զործեր կան, որոնք լոյսին կը բերեն 1915 թուականով
բնորոշուող իրականութիւնը Հայկական Եղեռնին: Լորտ Պրայսի,

Թոյնպիլի, Լեփսիուսի, Նանսենի, Նիյրոյի, Պրիզոնի, Մայեաքիլի, Նասյիմի, Էօքոնոմոսի հրատարակած վաւերագրերու հաւաքածոններուն վրայ կու դան աւելնալու ամերիկեան, անգլիական, Ֆրանսական, գուիցերիական, դերմանական եւ այլ հայաստաններու կոմիտէներուն հրատարակածները, որոնց վրայ երբ աւելցուին անգլիական կապոյտ դիրքերուն եւ դերման արխիւներէն վերցուած վաւերագրերներուն ալ հրատարակութիւնները, եւ հայ ու օտար ականատեսներու վկայութիւններն ու յուշերը՝ պատկերը կը դառնայ ամբողջական:

Իսկ չու չ'աւարտիր հարցը, որովհետեւ տակաւին կան հայ մարդեր, որոնց յուշերը չեն հաւաքուած եւ չեն յանձնուած Կիւթեանկերկի դէանին. անհրաժեշտ է որ Հայկական Տասնհինգը ապրած այս սերունդին վերջին մնացորդները խօսին՝ երբ ուշ չէ տակաւին եւ փրկուին թանկագին այն տեղեկութիւնները, որոնք վերջին վեց տասնամեակէ ի վեր մնացին անոնց մօտ որպէս յաճախանք եւ ապրում:

Այս բոլորէն ետք՝ կը թուի թէ տակաւին կան կարգ մը մարդեր, որոնք իրենց մօտ պահուած ունին Հայկական Տասնհինգին հետ աղերսուող յուշերը, վկայութիւններն ու վաւերագրերն երբ այդ Տասնհինգը ապրած մարդերուն, որոնք այսօր դուցէ դադրած են իսկ դոյութիւն ունենալէ: Վկա՞յ այս եզրակացութեան. ահաւասիկ, Գրիգոր Պողարեանը, որ այսօր մամուլին է յանձնած իր Յեղապահ Թուրքը - Վկայութիւններ, Քաղուած՝ Հրաշքով Փրկուածներու Զրոյցներէն հատորը, եւ որուն Ներածականով կը յայտարարէ, թէ «Յիսուն եւ չորս տարի առաջ դրի առնուած վկայութիւններ են ինչ որ կը մատուցանեմ այս հատորով. վկայութիւններ քաղուած հարազատ բերաններէն անոնց՝ որ ճաշակեցին անբեւեակայելի դառնութիւնները 1915-ի տեղահանութեան, Իթթիհատ վէ Թերագրը կոչուած կուսակցութեան սարքած ցեղապահութեան:

«Փարիզի Ազգային Պատուերակութենէն օրուան Ազգային Միութիւններուն ուղղուած շրջաբերականի մը հրահանգին վրայ էր, որ հաւաքեցի այս վկայութիւնները Համայն ենթակայ Սեյիմիէ աւանին մէջ ապաստան դրած 13 տարբեր վայրերէ տարագիր հայուհիներէ եւ դեռահասակ պատանիներէ եւ որոնց կցեցի հակիրճ մի տեսութիւնը Այնթապի հայոց տեղահանութեան, 1915 Յուլիս 29-է (նոր տոմարով Օգոստոս 11) 6 Դեկտեմբեր 1916 երկարաձգուող 497 օրերու իմ Տարագրի Օրագիրով»:

Յստակ է, ուրեմն, բովանդակութիւնը վկայութիւններու այս հատորին: Հոն կը տրուին տեղահանութիւնը Սեբաստիոյ Հաֆիթ կամ Գոչհիսար դաւառակին պատկանող Տուզխար գիւղին (ղեկուցողներ՝ Մարիճա Տեմիրճեան եւ Էլմաստ Զորթանեան),

Պարբերիկ Մալաթիա գաւառակին պատկանող Պեհեանիին (գեկուցողներ՝ Գէորգ Չալրպեան, Մարիամ Սանդէտեան եւ Մարիամ Տէր Աբրահամեան), Ակնի Ըլըճա գիւղին (գեկուցող՝ Չապէլ Սարաֆեան), Սերաստիոյ ենթակայ Պինկէօլի (գեկուցողներ՝ Մարիամ Տումանեան, Աղաւնի Առաքելեան եւ Արամ Լոշիկեան), Կեսարիոյ (գեկուցող՝ Տիրուհի Նազար Սախամեան), Պարբերիկ պատկանող Չմշկածագի եւ Իչպեկ գիւղին (գեկուցողներ՝ Չարուհի Դաւիթեան եւ Սանդուխտ Դիւթելեան), Մեղրէ-Պարբերիկ (գեկուցող՝ Մարիամ Յակոբ Պաղոյեան), Էսկիշեհէրի (գեկուցող՝ Վիքթորիա Կարապետ Մասլաքեան), Ամասիոյ պատկանող Վեղիր Քէօփրիւլի (գեկուցող՝ Թադուհի Տէր Արսէնեան), Սերաստիոյ Հաֆիթ կամ Գոչհիսար գաւառակին ենթակայ Սանձառ գիւղին (գեկուցող՝ Սանդուխտ Դարբինեան), նոյն գաւառակին պատկանող Կովտուն գիւղին (գեկուցողներ՝ Նազութ Քիպրեան, Լոնջէկիւլ Միքայէլեան եւ Հայկանոյշ Միքայէլեան), Սերաստիոյ Թոնուս կամ Շար Գըլլա գաւառակին պատկանող Իսանլու գիւղին (գեկուցողներ՝ Հայրիկ Համբարեան եւ անոր մայրը), եւ Տիրանակերտի ենթակայ Վերան Շահիբի (գեկուցողներ՝ Մանուշ Ալվազեան եւ Յուլիտա Ալվազեան)։ Տասներեք այս վայրերու տեղահանութեան պատճառներուն կը յաջորդէ Գրիգոր Պողարեանի «Օրապէր Տարագրի Կեանքիս»ը, որ գիրքին մէջ, հակիրճ նախարանէ մը ետք, կը գրուէ 126-206 էջերը։

Սիրտ բզկտող այս պատումները եթէ ոչ մէկ նոր բան կ'աւելցնեն նախապէս տրուածներու բովանդակութեան վրայ՝ առնուազն, սակայն, կը հիմնաւորեն զանոնք։ Այսպէս՝ այսօր աւելի քան վստահ կերպով կարելի է պնդել թէ Երիտասարդ-Թուրք Կուսակցութիւնը ի դորձ դրաւ Հայկական Տասնհինգը յստակ եւ որոշ ծրագրերի մը համաձայն, յստակ եւ որոշ նպատակի մը իրագործումին համար ալ. աւելին՝ այսօր անվարան կերպով կարելի է հաստատել թէ ներկայ թրքական պատմագրութիւնը կը ստէ՛ միայն, ինչպէս միշտ, եւ կը նենդափոխէ ի՛ր իսկ 1915-1923 տարիներու շրջանին վրայ տարածուող պատմութիւնը, որովհետեւ իրարու վրայ բարդուելու եկող վկայութիւնները բոլորովին այլ պատմութիւն կը վերբերեն։ Լոյսին եկող իւրաքանչիւր վկայութիւն, որքան որ ալ անիկա ըլլայ կարճ, ջահ մըն է այսօր հայ պատմագրութեան համար, որ վերջին մէկ տասնամեակէ ի վեր նուիրուած է Հայկական Տասնհինգին լուսարանումին եւ գնահատումին։

Կ'արժէ՛ որ Պողարեանի Յեղասպան Թուրքը - վկայութիւն-Ոնր հատորը օրինակ ծառայէ այն բոլորին, որոնք իրենց մօտ պահուած ունին զանազան վկայութիւններ՝ լոյսին բերելու զանոնք եւ սեփականութիւնը դարձնելու գիտութեան եւ հայ պատմագրութեան,

որովհետեւ մեզմէ ո՛չ մէկն իրաւունք ունի մեր պատմութենէն խլելու իր արմատները, իր նիւթերը, որոցմով է որ միայն կարելի պիտի դառնայ ամբողջական ընկալումը Հայկական Տասնհինգին: Այս հասկացողութեամբ՝ զնահատելի եւ շնորհակալ աշխատանք մըն է կատարածը Գրիգոր Պողարեանին, որուն անձնական արխիւը, վըստաս հենք, տակաւին ունի բաւական արժէքաւոր նիւթեր մեր վերջին շրջանի պատմութեան հետ առնչուող:

Ճիշդ հոս ալ հրապարակ կու դայ այլ հարց. ի՞նչ պատահեցաւ այն երեսունմէկ տեղեկագիրներուն, որոնք 1918 թուականին Հալէպի մէջ կազմուած հայրենակցական միութիւններու կողմէ պատրաստուեցան եւ Արամ Անտոնեանի հետ զրկուեցան Բարիզ՝ յանձնուելու համար Պողոս Նուպարին: Ըստ հայրենակցական միութիւններու կողմէ կազմուած Միջ-դաւառային Միութեան ատենապետ Հայկ Արամեանի՝ Արամ Անտոնեան զանոնք «չէր յանձնած»:

Հայրենակցական միութիւններու թիւն է երեսուն երկու, ի՞նչպէս պատահեցաւ որ Հայկ Արամեան իր մօտ պահեց իր ծննդավայրին՝ Զէյթունի քսան երեք էջնոց տեղեկագիրը: Ինչո՞ւ համար Անտոնեանին յանձնուեցաւ միայն երեսուն մէկ տեղեկագիր եւ ի՞նչ ըրաւ Անտոնեան զանոնք: Եթէ ինք իւրացուց՝ իր արխիւին հետ չփոխանցուեցա՞ն Բարիզի Նուպարեան Մատենադարանին, եթէ յանձնեց Պողոս Նուպարին՝ անկէ չանցա՞ւ նոյն մատենադարանը: Իսկ եթէ այսօր այդ տեղեկագիրները չեն դտնուիր այդ մատենադարանին մէջ՝ որո՞ւն քով են անոնք:

Հարցեր են այս բոլորը, որոնց պատասխանը, դրական կամ ժխտական, պէտք է որ տրուին: Պողարեան հրատարակեց իր մօտ դտնուողները, բայց անիկա միակը չէ՛ր. կային իրեն նման ուրիշներ ալ: Ի՞նչ պատահեցաւ անոնց հաւաքածներուն: Անտոնեանին կամ Հայկ Արամեանին նման անո՞նք ալ իւրացուցին: Շա՞հ մը ունէին այդպէս ընելէն, թէ ոչ դտնուեցան անփոյթ եւ պատճառ դարձան որ մեր պատմութեան համար շա՛տ թանկագին եղող այս վկայութիւնները ի սպառ կորսուին:

Այսօր մենք շնորհակալ ենք Գրիգոր Պողարեանէն. շնորհակալ ենք, որովհետեւ իր հաւաքած եւ յիսուն հինգ տարի իր մօտ պահած այս վաւերագիրները կը փրկէ կորուստէ եւ առիթ մը կու տայ ոմանց մտածելու, խղճմտօրէն մտածելու, եւ հրապարակ նետելու այն ինչ որ հինգ ու կէս տասնամեակէ ի վեր անփութօրէն պահած են իրենց դարակներուն եւ գրողներուն մէջ, ուր, ա՛նկասկած, ոչ մէկուն կրնան ըլլալ օգտակար:

Շնորհակալութիւն:

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ